

Ի՞նչ է գետի մը ընթացքը, ծովու մը՝ ափունքին տուած հարուածները, որոց իւրաքանչիւր ալիք միեւնոյն շարժմունքն ու խաղն ընելով մեր աչքը եւ մեր միտքը կը գրաւեն առանց մեր մտքին տիրապետող խորհուրդը խախտելու: Վասկանուշ այդ ճորոխին հախուռն ջրերուն մէջ կը տեսներ իւր Տարօսս հայրենի պալատին ոսկեձեղուն եւ նկարէն սենեակները, կը տեսներ զինք իւր ոսկեթել բեհեզներուն մէջ, կը տեսներ Յովնան Սասնոյ առիւծակորիւնը իւր քսան տարիներուն մէջ՝ նորա լայն ճակատը եւ մեծ գլուխը սեւ մազերով պսակեաց, որ ուներուն վրայ կ'իջնէին, նորա կայահակնափայլ աչքերը, որ իւր ակնարկին առաջ կը խոնարհէին եւ կը քաղցրանային, կը տեսներ լուսնի հանդարտ լուսով իւր վարդենեաց պարտեզը ինք նստած եւ առիւծը ոտքերուն քով ի գունձս, կը տեսներ յանկարծ իւր գլխուն վրայ կանգնած իւր հօր Վասակայ բարկաճայթ աչքերը... եւ ահա ոսկեձեղուն պալատ, բեհեզներ, Յովնան, վարդենիք, լուսին եւ ամեն բան ճորոխի ալիք կը յափշտակէին, կը տանէին, եւ կը մնար ինք իւր տխուր սենեկին մէջ միայնակ, որուն լռութիւնը կ'ընդհատէր կրակարանին հրոյն ճարճատմունքը:

Գիշերն հասեր էր երբ բերին աղջիկը մայրապետ իշխանուհուն յառջեւ, եւ ամէնքը քաշուեցան. ակնարկ մը ձգեց սա աղջկան վրայ. այն քնքուշ կազմուածքներէն էր, որոնց թափանցիկ մորթը շուշանի սպիտակութիւնն ունի, որոնց մազերուն գոյնը արծաթի փայլն ունի, եւ որոնց եութիւնը կարելի չէ իրենց տեղէն հեռացնել վասնզի երբեք չունին զօրութիւն կեանք քաղելու օտար հողէ եւ արմատէ:

Յագիւ թէ անունը, ո՛վ լինիլն հարցուց, արտասուաց հեղեղ մը եւ սանձեալ հեկեկանաց ձայն մը եղաւ բոլոր պատասխան: Վասկանուշ ելաւ, իբր գթած մայր առաւ ձեռքէն, նստեցուց քովը եւ սպասեց մինչեւ որ հանդարտեց հեկեկանքը:

— Յիմա, որդեակ իմ,— ըսաւ,— զրուցէ ինձ ամէն բան եւ միայն ճշմարիտը, ո՛ր գիտէ կարելի է որ ես ճար մը, հնարք մը գտնեմ քու թշուառութեանցդ, զրուցէ՛ ո՛վ ես դու, ո՞ւմ աղջիկն ես, ինչո՞ւ քեզ